

ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԵՌԱՋ

ՁԵՆԱԴԻՐՈՒԹԻՒՆ ՉՈՐՍ ԱՔԵՂԱՆԵՐՈՒ

Օգոստոս 7ի կիրակին, վարդապետ կամ Տօն Պայծառակերպութեան ըստ Հին Տոմարի, հոգևոր խրախմբանքի կրկնապէս բերկրայից օր մը կըլաւ Ս. Աթոռոյոյ համար: Այդ օրը, քահանայական աստիճան և վեղարի օրհնութիւն ստացան մեր Ընծայարանի բարձրագոյն կարգի 4 սարկաւազ սաները, Նիդաղար, Սիմէոն, Յակոբ և Ղազարոս, որոնք կանոնաւոր յաջողութեամբ աւարտած ըլլալով Հաստատութեան կրօնական և եկեղեցագիտական ուսմանց ութամսն դասընթացը, և իրենց կեանքովն ու կրթութեամբ արժանացած ըլլալով գնահատութեան, իրաւունք ստացած էին շնորհաբաշխութեան:

Տ. Թորգոմ Ս. Պատրիարք Հայրը, իւրաքանչիւրին ճակատը սրբալոյս միւռանով դրոշմած ատեն կուտայ նաև անոր նոր անունը: Առաջինը՝ Նիդաղար, կը կոչուի Տ Նիդիշէ՛. ամենքը կ'ըմբռնեն թէ ձեռնադրողին դիտումն էր առաջին հունձքին երախայրիքը ձօնել իր պաշտելի հոգեծնողին՝ Նիդիշէ Պատրիարք Դուրեանի յիշատակին. երկրորդը, Սիմէոն՝ Տ. Հայրիկ՛, պարզ է, յանուն Խրիմեան Հայրիկի, որուն սէրը Սրբազանին ամենէն անոյշ հրայրքներէն մին է կղած. երրորդը, Յակոբ՝ Տ. Տիրայր՛. քիչերը միայն կը հասկնան թէ ձեռնադրողը ատով իր հոգևոր որդիութեան տուրքը կ'ուզէր մատուցանել հանգ. Օրմանեան Սրբազանի, անոր գրական անունովը հազուեցնելով իր առաջին ձեռնաստուններէն մին. հոգևոր շորթորդը, Ղազարոս՝ Տ. Ասողիկ՛, յանուն Ղարբեմանքի (Արմաշու) հիմնադիր Խորէն Պատրիարք Աշըքեանի, որ Ասողիկ ստորագրած է միշտ իր գրական յօդուածները, և որուն հանդէպ այնքան խոր կղած է Արմաշի բոլոր նախկին սաներուն մեծարանքի զգացումը:

1 Տէրտերեան, Գահակայր Ս. Աթոռոյոյ:
 2 Ալանեան, հետազոյնի Հուսարարապետ Յ. Աթոռոյ վախճանեալ 1981 ին:
 3 Տէրվիշեան, այժմ Ս. Վրդ. Ի Գալիֆ:
 4 Ղազարեան, հետազոյնի Առաջնորդ Հայր իրաքի, վախճանեալ 1978 ին:

Ներկային, ըստ վանական հինաւուրց օտորութեան, ընդհանուր սեղանասան մէջ վայելուեցաւ ուրախութեան ընթրիք, առանց գինիի, բայց կրգերու և ճառերու ոգևորութեամբ: Խօսեցան Ս. Պատրիարք Հայրը, Տ. Սմբատ Սրբազան, Վահմ. Ոսկան Պէյ Մարտիկեան և Տ. Գեորգ, Տ. Նորայր և Տ. Տիրան վարդապետներ:

Յաջորդ օրուընէ սկսեալ, արեղանները սկսան իրենց քառասնօրեայ ներանձնուծին շրջանը, զոր պիտի կատարեն Սուրբ Թորոս մատրան մէջ:

(«Սիւն», 1982, Զ. Կարի, Սեպտեմբեր, Թիւ 9, էջ 281 - 286):

ՄԱՆ՝ ԼԵՒՈՆ ՁԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ

Ս. Աթոռոյ Միաբանութիւնը և ուսուցչութիւնը վիշաբ ունեցան Հոկտ. 12ի Դշ. կէս օրէ յետոյ իր յաւիտենական հանգիստը առաջնորդելու Հաստատութեան բաղձարդիւն դպրագոյն-ուսուցիչը՝ Պր. Լևոն Ձիլինկիրեան, հանրածնութեմ արուեստագէտը: Պոլսեցի՝ տարիքն էր 70:

Հանգուցեցալը հեղինակած և գործադրած է եռամսյ Պատարագ:

(«Սիւն», 1982, Զ. Տարի, Նոյեմբեր, Թիւ 11, էջ 352):

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻ

Նոյմ. 13ի կիրակիի յետ միջօրէին, էջմիածնէ ստացուեցաւ Նոյմ. 12 Ուսկիր հեռուեալ հեռագիրը, Ֆրանսերէնով, ստորագրուած Պր. Թորոս Մառմանեանէ, որ Սաղիմահայութեան ներկայացուցիչն էր Ալդ. Նիզը. Ընդհ. Ժողովին:

Խորէն Արքեպիսկ. (Մուրատէզեան) քնտրուեցաւ կաթողիկոս. օծումը կը կատարուի վաղը:

Այս հեռագիրը ստացուելուն պէս, Ամեն Ս. Պատրիարք Հայրը, ի նշան ուրախութեան, անմիջապէս հնչեցնել տըլաւ Մայր Տաճարին զանգակները, Պատրիարքարանի մեծ զանկիճը հրախրեց ամբողջ Միաբանութիւնը և հրապարակեց կարգաց աւելցուող հեռագիրը:

(«Սիւն», 1982, Զ. Տարի, Դեկտեմբեր, Թիւ 12, էջ 402):